ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԴԵԿՏԵՄԲԵՐ 2007)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
ՀՀ ԿԲ խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 29-ի նիստի՝
«Դրամավարկային քաղաքականության ծրագիր.
2008 թ. I եռամսյակ» արձանագրությունը, ինչպես նաև
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ՀՀ վճարահաշվարկային, ֆինանսական համակարգի հիմնական
ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և ֆինանսական
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում
ընդգրկված է ՀՀ միջազգային պահուստների, փողի
ագրեգատների, ֆինանսական շուկայի և փոխարժեքների
վերաբերյալ տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(29.12.2007)

Դրամավարկային քաղաքականության ծրագիր
2008 թ. I եռամսյակ

2007 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Կ. Մինասյանը, Վ. Գաբրիելյանը, Ա. Նորեկյանը:

2008 թվականի առաջին եռամսյակի դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ ՀՀ ԿԲ խորհրդի կողմից որոշման կայացմանը նախորդեց 2007 թ. չորրորդ եռամսյակի տնտեսական իրավիճակի և փաստացի գնաճի վերլուծության և 2008 թվականի կանխատեսումների ներկայացումը: Փաստացի տվյալները և կանխատեսումները ներառում են տնտեսության իրական, արտաքին, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները, ինչպես նաև ապագա ժամանակահատվածի հավանական ռիսկերը:

Տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի պահպանման վարկածի պայմաններում 2007 թվականի չորրորդ եռամսյակում իրականացված կանխատեսումներով՝ 2008 թվականի գնաճը տարվա ընթացքում մշտապես կգերազանցի նպատակային միջակայքի վերին սահմանը և միայն տարեվերջին, ցուցաբերելով եռամսյակային նվազող հետագիծ, կհայտնվի միջակայքում՝ այնուամենայնիվ գտնվելով վերին սահմանին մոտ:

2007 թվականի չորրորդ եռամսյակի փաստացի ցուցանիշները

2007 թվականի դեկտեմբերին նոյեմբերի նկատմամբ արձանագրվել է 1.5% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճը կազմել է 6.6%՝ շուրջ 1.0 տոկոսային կետով գերազանցելով նպատակային թիրախի վերին սահմանը, այն դեպքում, երբ Կենտրոնական բանկի 2007 թվականի հունիսի և սեպտեմբերի կանխատեսումների համաձայն՝ 12-ամսյա գնաճը 2007 թ. դեկտեմբերին ակնկալվում էր շուրջ 5.0%-ի շրջանակում[1]: Վերջինիս համեմատ փաստացի ավելի բարձր գնաճի ձևավորումը պայմանավորվել է մի շարք հանգամանքներով: Թեև բուսական և կենդանական յուղերի միջազգային գների աճը սպասելի էր[2], սակայն փաստացի արձանագրվել է կտրուկ և կանխատեսվածից էականորեն բարձր աճ, որի հետևանքով այս ապրանքների ներքին գների աճի նպաստումը ընդհանուր գնաճին կազմել է 1.2 տոկոսային կետ: Հացահատիկի միջազգային գների բարձրացումը կանխատեսումների բազային սցենարում ևս ներառված էր, սակայն ենթադրվում էր, որ դա տեղի կունենա ավելի երկար ժամանակահատվածում՝ շարունակվելով մինչև 2008 թ. առաջին կիսամյակի ավարտը՝ կուտակային նպաստելով գնաճին 2.8 տոկոսային կետով, որը սակայն ամբողջովին դրսևորվել է 2007 թ. երկրորդ կիսամյակում[3]՝ նպաստելով գնաճին 3.4 տոկոսային կետով: Ակնկալվում էր, որ նավթի

[1] *Տե՛ս 2007 թ. հուլիսի 3-ի և հոկտեմբերի 2-ի տոկոսադրույքների վերաբերյալ ՀՀ ԿԲ խորհրդի նիստերի արձանագրությունները:*
[2] *Որպես հացահատիկի միջազգային գների աճի հետևանք՝ կանխատեսվում էր նաև այլ պարենային ապրանքների, մասնավորապես՝ կենդանական և բուսական յուղերի գների աճ, սակայն ակնկալվում էր, որ ինքնարժեքի և շահույթի ճշգրտման հաշվին աճի տեմպերը էականորեն բարձր չեն լինի (տե՛ս 2007 թ. հոկտեմբերի 2-ի տոկոսադրույքների վերաբերյալ ՀՀ ԿԲ խորհրդի նիստի արձանագրությունը):*
[3] *Պարենային ապրանքների (այդ թվում՝ հացահատիկի) և նավթի միջազգային գների կանխատեսվածից բարձր աճը, որպես գնաճի կանխատեսված ցուցանիշի գերազանցման ռիսկ, դիտարկվում էր արդեն իսկ երկրորդ եռամսյակի վերջից (տե՛ս 2007 թ. հուլիսի 3-ի և հոկտեմբերի 2-ի տոկոսադրույքների վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստերի արձանագրությունները):*

միջազգային գները կիասնեն 1 բարելի դիմաց 85 ԱՄՆ դոլար սահմանագծին միայն տարվա վերջում, այնինչ արդեն սեպտեմբեր-հոկտեմբերին այն ձևավորվել է ավելի բարձր մակարդակի վրա:

Հատկանշական է, որ պարենային ապրանքների գների աճը պայմանավորված է ինչպես համաշխարհային պահանջարկի արագ աճով՝ զարգացող երկրների եկամուտների և կենսամակարդակի պահանջարկի աճի արդյունքում, այնպես էլ առաջարկի սահմանափակությամբ՝ կլիմայական փոփոխությունների և պաշարների սակավության հետևանքով: Այս զարգացումները, բնականաբար, գնաճային ճնշումներ են առաջացրել ոչ միայն Հայաստանում, այլև մյուս երկրներում[4]: Մասնավորապես՝ ԱՊՀ, Մերձբալթյան և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում արձանագրվել է գնաճի նպատակային թիրախի էական գերազանցում (տե՛ս Հավելվածը): Այս համատեքստում, մեր հանրապետությունում, սկսած 2006 թ. կեսից, դրամավարկային քաղաքականության պայմանների խստացումը թույլ է տվել մեղմել գնաճի նպատակային թիրախից նման մեծ շեղումները: 2006 թ. օգոստոս-հոկտեմբերին ՀՀ կենտրոնական բանկը բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.75 տոկոսային կետով, իսկ 2007 թ. հուլիս-դեկտեմբերին՝ 1.25 տոկոսային կետով:

2007 թ. չորրորդ եռամսյակի գնաճը պայմանավորվել է տնտեսության տարբեր հատվածների հետևյալ զարգացումներով.

- Արտաքին հատվածի գնաճային ճնշումները ոչ միայն շարունակվել են արտահայտվել, այլ նաև առավել ուժգնացել են: Նավթի Light Sweet տեսակը Նյու Յորքի ապրանքահումքային բորսայում հասել է գրեթե 100 ԱՄՆ դոլարի՝ բարելի դիմաց, ոսկու գները Լոնդոնի մետաղների բորսայում՝ ավելի քան 830 ԱՄՆ դոլար ունցիայի դիմաց, իսկ պղնձի գները՝ 8300 ԱՄՆ դոլար տոննայի դիմաց, հացահատիկի գները Չիկագոյի ապրանքահումքային բորսայում՝ գրեթե 10 ԱՄՆ դոլար բուշելի դիմաց: Պետք է նշել նաև, որ հումքային ապրանքների գների աճին զուգահեռ ավելացել են նաև պարենային ապրանքների, այդ թվում՝ բուսական և կենդանական յուղերի գները: Վերջինս արտացոլվել է համաշխարհային գնաճի արագացման մեջ՝ հատկապես զարգացող երկրների, քանի որ զարգացող երկրներում պարենային ապրանքների կշիռը սպառողական զամբյուղում ավելի մեծ է: Բացի այդ, նավթի միջազգային գների շարունակական բարձրացման հետևանքով արդեն զգալի է դառնում տրանսպորտային ծախսերի ավելացման ազդեցությունը ներմուծվող ապրանքների գների վրա: Ընդհանուր առմամբ, թեև եռամսյակի վերջում նավթի և պարենային ապրանքների միջազգային գները որոշակի կայունացել են, սակայն գնաճային ճնշումները չորրորդ եռամսյակում ուժգնացել են, որն էապես ազդել է ներքին գների վրա:
- 2007 թվականի հունվար-դեկտեմբերին[5] տնտեսական աճի ցուցանիշը կազմել է 13.5% (հունվար-նոյեմբերին՝ 13.6%), որին նպաստել են հիմնականում գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների ճյուղերը: Գյուղատնտեսության ավելացված արժեքի աճը կազմել է շուրջ 10%՝ շնորհիվ բուսաբուծության, մասնավորապես՝ մրգի, բանջարեղենի և ցորենի հարուստ բերքի ստացման: Արդյունքում, սպառողական շուկայում, չնայած բնակչության եկամուտների շարունակական ավելացմանը, մրգի և բանջարեղենի առաջարկի ավելացման հետևանքով մրգի գները նախորդ տարվա համեմատությամբ աճել են ավելի ցածր տեմպերով, իսկ բանջարեղենի գները նույնիսկ նվազել են:

Շինարարության ճյուղում շարունակում է արձանագրվել աճի տեմպերի արագացման միտում, որի արդյունքում ճյուղի ավելացված արժեքի աճը կազմել է շուրջ 20%՝ պայմանավորված հիմնականում տրանսպորտի և կապի ոլորտներում իրականացվող մեծածավալ կապիտալ շինարարությամբ, ինչպես նաև էներգետիկայի ոլորտում փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման ծրագրի շրջանակներում կատարված ներդրումներով: Ի տարբերություն նախորդ տարվա՝ 2007 թվականին արձանագրվել է բնակարանային շինարարության աճի տեմպերի կտրուկ նվազում՝ պայմանավորված խոշոր բնակարանային շինարարական նախագծերի (մասնավորապես՝ Հյուսիսային պողոտայի շինարարության) ավարտով:

Ծառայությունների ոլորտում ավելացված արժեքի աճը կազմել է 12.5%: Ընդ որում, առավել բարձր աճ է արձանագրվել հիմնականում տրանսպորտի և կապի, ինչպես նաև զբոսաշրջության հետ կապված ծառայությունների մասով:

---

[4] Պարենային ապրանքների միջազգային գների աճի վերաբերյալ ավելի մանրամասն կներկայացվի ՀՀ կենտրոնական բանկի 2007 թվականի չորրորդ եռամսյակի գնաճի հաշվետվությունում:

[5] 2007 թվականի չորրորդ եռամսյակի և տարեկան ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի գնահատումներն են՝ հիմնված հունվար-նոյեմբերի փաստացի ցուցանիշների վրա:

Արդյունաբերության ավելացված արժեքի իրական աճը հունվար-դեկտեմբերին կազմել է 2.8%[6], որին նպաստել է սննդի և քիմիական արդյունաբերության, ինչպես նաև մետաղագործության և շինանյութերի արտադրության ծավալների աճը:

- 2007 թ. երրորդ եռամսյակի մասնավոր սպառման և ներդրումների փաստացի ցուցանիշները ընդհանուր առմամբ համընկել են նախկինում կատարված գնահատումներին: Դա թույլ է տալիս եզրակացնել, որ, ինչպես և ակնկալվում էր, չորրորդ եռամսյակում ներքին պահանջարկի ազդեցությունը գնաճի վրա ընդլայնող է: Ներքին պահանջարկի գնաճային ճնշումները հիմնականում պայմանավորված են մասնավոր հատվածի ծախսումների էական աճով, ինչի արդյունքում վերջինս շարունակել է գերազանցել իր հավասարակշիռ մակարդակը: Մասնավոր ներդրումների հավասարակշիռ մակարդակից ոչ մեծ դրական շեղումը գրեթե չեզոք ազդեցություն է ունեցել գնաճի վրա[7]: Միաժամանակ, հարկաբյուջետային քաղաքականությունը, գնաճի վրա ազդեցության տեսանկյունից, 2007 թ. չորրորդ եռամսյակում կանխատեսվող առավել ընդլայնողի փոխարեն եղել է գրեթե չեզոք՝ պայմանավորված հարկերի հավաքագրման ծրագրի նշանակալի գերակատարմամբ: Վերջինս որոշակիորեն մեղմել է ամբողջական պահանջարկի գնահատված աճի տեմպերը, որի արդյունքում ամբողջական պահանջարկի փաստացի զարգացումները լրացուցիչ գնաճային ճնշումներ չեն առաջացրել:
- 2007 թ. չորրորդ եռամսյակում ևս պահպանվել են տնտեսության դրամայնացման աճի բարձր տեմպերը, ինչի արդյունքում դրամավարկային բոլոր ցուցանիշները, մասնավորապես՝ դրամային ագրեգատները, գերազանցել են եռամսյակում ակնկալվող 12-ամսյա աճի տեմպերը: Դրամային զանգվածն ավելացել է տ/տ 63.4%-ով[8], այդ թվում՝ դրամային ավանդները՝ 78.4%-ով, շրջանառությունում գտնվող կանխիկ դրամը՝ 54.3%-ով, իսկ փողի բազան՝ 53.1%-ով: Արդյունքում, դրամային բազմարկիչն աճել է տ/տ 6.7%-ով: Տարեսկզբից արձանագրված նույն բարձր տեմպերով շարունակել է աճել տնտեսության վարկավորումը՝ չորրորդ եռամսյակում հասնելով տ/տ 73.3%-ի:

2008 թվականի առաջին երեք եռամսյակների ճշգրտված և 2008 թվականի չորրորդ եռամսյակի կանխատեսումները

Արտաքին միջավայր

Թեև հումքային ապրանքների շուկայում տարվա վերջում իրավիճակը կայունացել է, սակայն չորրորդ եռամսյակի արտաքին գնաճային ճնշումներն իրենց ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա կպահպանեն նաև 2008 թվականի առաջին կիսամյակում: Հետագայում արտաքին գնաճային նոր ցնցումների բացակայության պայմաններում ակնկալվում է գնաճային ճնշումների թուլացում:

Եվրոյի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2008 թվականի ընթացքում որոշակիորեն կարժեզրկվի՝ տարեվերջին հասնելով 1.37 ԱՄՆ դոլար եվրոյի դիմաց փոխարժեքին, թեև տարեկան կտրվածքով կլինի 2.6 տոկոսով բարձր նախորդ տարվա ցուցանիշից: Դրա պատճառը այն հանգամանքն է, որ ներդրողները, հաշվի առնելով ԱՄՆ-ի և Եվրոգոտու տոկոսադրույքների ճեղքվածքի կրճատումը, իրենց ուշադրությունը կուղղեն ԱՄՆ ընթացիկ հաշվի և բյուջեի պակասուրդների կրճատմանը: Բացի այդ, 2008 թվականի երկրորդ կիսամյակում ակնկալվում է ԱՄՆ-ի տնտեսության աճի տեմպերի վերականգնում, մինչդեռ Եվրոգոտու տնտեսական աճը 2008 թվականին կշարունակի դանդաղել:

Նավթի միջազգային գները 2008 թվականի առաջին եռամսյակում կպահպանեն բարձր մակարդակ, որից հետո կդրսևորեն նվազման միտում՝ տարեվերջին հասնելով մինչև 76 ԱՄՆ դոլար բարելի դիմաց նշագծին: Դա ընդհանուր առմամբ պայմանավորված է նավթի պահանջարկի կանխատեսվող նվազմամբ, որն արդեն իրականանում է գների բարձր մակարդակի արդյունքում: Նոր ռիսկերի և ցնցումների բացակայության պարագայում այդ նվազումը պայմանավորված կլինի նաև շուկայում սպեկուլյացիոն ֆոնի թուլացմամբ և ներդրողների կողմից երկար դիրքերի փակմամբ:

---

[6] Առանց ադամանդի ցուցանիշների՝ արդյունաբերության թողարկման ծավալները հունվար-նոյեմբերին ավելացել են 9.1%-ով:

[7] 2007 թվականի չորրորդ եռամսյակում ակնկալվում է մասնավոր ծախսումների 13.6% իրական աճ՝ մասնավոր սպառման 11.5% և մասնավոր ներդրումների 18.8% իրական աճի պայմաններում:

[8] Փողի զանգվածի և դրա բաղադրիչների վերաբերյալ տեղեկատվությունը դեկտեմբերի 21-ի դրությամբ է:

Այստեղ առկա հիմնական անորոշությունն արտահայտվում է ԱՄՆ տնտեսության վրա անշարժ գույքի շուկայի անկման ազդեցության չափի և տևականության գնահատումներում: Որքանով այն կանդրադառնա աշխատուժի շուկայի և սպառման չափերի վրա, այնքանով կարող են փոխվել նաև ԱՄՆ տնտեսական աճի հեռանկարները՝ արդյունքում անդրադառնալով և՛ հիմնական արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի, և՛ հումքային ապրանքների շուկաների զարգացումների վրա:

Հացահատիկի առումով անորոշությունը շատ ավելի մեծ է՝ պայմանավորված հիմնականում 2008 թվականի բերքի ակնկալիքներով, որոնք կձևավորվեն 2008 թվականի մայիս-հունիսին: Ընդ որում, էական ազդեցություն կարող են ունենալ նաև ինչպես պահանջարկի աճը և պաշարների ցածր մակարդակը, այնպես էլ զարգացած երկրների գյուղատնտեսական քաղաքականությունը և կենսավառելիքի կիրառության աճի տեմպերը: Հացահատիկի գները որոշակիորեն կարող են ազդել նաև մյուս պարենային ապրանքների՝ մսի, կաթնամթերքի, կենդանական և բուսական յուղերի և այլնի գների վրա, որոնք կպայմանավորվեն նաև տվյալ ապրանքների շուկաների իրավիճակով:

Ընդհանուր առմամբ, արտաքին միջավայրից գնաճային ճնշումները 2008 թվականի առաջին կիսամյակում կպահպանվեն և, դրական զարգացումների դրսևորման պարագայում, երկրորդ կիսամյակից կսկսեն թուլանալ: Բնականաբար գնաճային ճնշումների ավելացման ուղղությամբ ռիսկեր դեռևս առկա են:

Համախառն առաջարկ

2008 թվականի չորս եռամսյակներում ակնկալվում է 10-11% տնտեսական աճի արձանագրում, որին, ինչպես և նախորդ տարիներին, հիմնականում նպաստելու են ծառայությունների և շինարարության ճյուղերը:

Շինարարության ճյուղի 2008 թ. համար կանխատեսվող ավելացված արժեքի 14-17% աճը պայմանավորված է տրանսպորտի, կապի, էներգետիկայի և մետաղագործության ճյուղերում ակնկալվող ներդրումներով: Բացի այդ, 2007 թվականին արձանագրված բնակարանային շինարարության ծավալների նվազումը հաջորդ տարի չի շարունակվի: Այնուամենայնիվ, շինարարության ճյուղից եկող ռիսկերը կանխատեսված աճի ցուցանիշի գերազանցման ուղղությամբ են՝ կապված մի քանի խոշոր նախագծերի հնարավոր իրականացման հետ:

Արդյունաբերության ճյուղում 2008 թվականին ակնկալվում է ավելացված արժեքի 6.5-8% աճ՝ պայմանավորված քիմիական արդյունաբերությունում, մետաղագործությունում և շինանյութերի արտադրությունում սպասվող արտադրության ծավալների ավելացմամբ: Արդյունքում, արդյունաբերության ճյուղի նպաստումը տնտեսական աճի ցուցանիշին կազմելու է 1-1.4 տոկոսային կետ:

Արդյունաբերության ճյուղից եկող ռիսկերը կանխատեսված ցուցանիշների գերազանցման ուղղությամբ են և պայմանավորված են ադամանդագործության ենթաճյուղում հնարավոր զարգացումներով, մասնավորապես՝ ՌԴ ադամանդագործական ընկերության հետ կնքված պայմանագրի իրագործմամբ:

Ծառայությունների ոլորտում շարունակում է ակնկալվել բարձր աճի միտում, որը հիմնականում ապահովվելու է տրանսպորտի և կապի, ինչպես նաև զբոսաշրջության հետ կապված ծառայությունների հաշվին: Արդյունքում, 2008 թվականին ծառայությունների ավելացված արժեքի իրական աճը կանխատեսվում է 12-14%, իսկ նպաստումը տնտեսական աճին՝ շուրջ 3.5-4.2 տոկոսային կետ: Այստեղ նույնպես առկա են կանխատեսվող ցուցանիշների գերազանցման ռիսկեր՝ պայմանավորված տրանսպորտի և կապի ոլորտներում նախկինում կատարված և տարվա ընթացքում իրականացվելիք ներդրումների շահագործմամբ, ինչպես նաև երկաթգծի հավատարմագրային կառավարման արդյունքում բեռնափոխադրումների և ուղևորաշրջանառության հնարավոր աշխուժացմամբ:

Գյուղատնտեսության ճյուղում ակնկալվում է 2-4% իրական աճ: Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բուսաբուծության ենթաճյուղի արտադրության ծավալները մեծապես կախված են նաև կլիմայական պայմաններից, ապա դրան բնորոշ ռիսկերը երկակի բնույթ ունեն, մինչդեռ անասնապահությունում ակնկալվում է շուրջ 4% կայուն աճ:

Համախառն պահանջարկ

Մասնավոր սպառման և ներդրումների հավասարակշիռ մակարդակներից շեղման գնահատումների համաձայն՝ 2008 թվականի առաջին եռամսյակում մասնավոր ծախ-

սումների կողմից կկատվեն որոշակի գնանկումային ճնշումներ՝ հիմնականում պայմանավորված մասնավոր սպառման բացասական ճեղքվածքի արծանագրմամբ: 2008 թվականի երկրորդ եռամսյակից սկսած մասնավոր ծախսումների ճեղքվածքը կվերափոխվի դրականի և կխորանա հատկապես երրորդ եռամսյակի ընթացքում:

Ըստ գնահատումների՝ 2008 թվականին մասնավոր ներդրումների դրական շեղումը հավասարակշիռ մակարդակից գրեթե զրոյականի շրջանակում է, մինչդեռ մասնավոր սպառման դրական ճեղքվածքը տատանվում է 0.3-0.5%-ի միջակայքում, ինչը վկայում է այն մասին, որ 2008 թվականին մասնավոր ծախսումների կողմից ակնկալվող գնաճային ճնշումները կպայմանավորվեն սպառման առաջանցիկ աճով:

2008 թ. ակնկալվում է հարկաբյուջետային քաղաքականության ընդլայնող ազդեցություն: Դա պայմանավորված է տնտեսության վրա պետական հատվածի ազդեցության մեծացմամբ, մասնավորապես՝ տարեսկզբից նախատեսված կենսաթոշակների և սոցիալական ծախսերի կտրուկ ավելացմամբ: Վերջինիս հետևանքով առաջին եռամսյակում սպասվում է 2.8% ընդլայնող ազդեցություն՝ 2007 թվականի առաջին եռամսյակում փաստացի գրանցված 0.6% ընդլայնողի փոխարեն: Տարվա արդյունքում համախառն պահանջարկի և, հետևաբար, գնաճի վրա սպասվում է հարկաբյուջետային քաղաքականության մոտ 2.0% ընդլայնող ազդեցություն:

Հաշվի առնելով իրական և հարկաբյուջետային հատվածներում ակնկալվող միտումները՝ կարելի է եզրակացնել, որ կանխատեսվող ժամանակահատվածում ամբողջական պահանջարկն առաջարկի համեմատությամբ կաճի առաջանցիկ տեմպերով՝ հանգեցնելով գնաճային ճնշումների դրսևորման:

2008 թ. առաջին երեք եռամսյակների համար ապրանքների և ծառայությունների արտահանման աճի՝ սեպտեմբերին տրված ցուցանիշները չեն փոփոխվել, իսկ չորրորդ եռամսյակի համապատասխան աճի ցուցանիշը կկազմի 20-25%: Արտահանման աճը կպայմանավորվի արդյունաբերության աճի բարձր մակարդակի պահպանմամբ:

2008 թ. երկրորդ և երրորդ եռամսյակների ներմուծման ցուցանիշները ճշգրտվել են աճի ուղղությամբ: Այդ ժամանակահատվածում ապրանքների և ծառայությունների ներմուծման աճը կկազմի 28-32%, իսկ չորրորդ եռամսյակում՝ 22-24%: Ակնկալվում է, որ կպահպանվեն հումքային, ներդրումային և սպառողական ապրանքների ներմուծման մեծ ծավալները:

Աշխատանքի շուկա

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի գնահատումների՝ 2008 թվականին աշխատանքի շուկայի ազդեցությունը գնաճի վրա կլինի խթանող, քանի որ աշխատավարձի աճը կշարունակի գերազանցել աշխատանքի արտադրողականության աճի ցուցանիշը: Աշխատանքի շուկայի կողմից գնաճային ճնշումներն ավելի վառ կարտահայտվեն առաջին կիսամյակում, որից հետո որոշակիորեն կմեղմվեն՝ պայմանավորված արտադրողականության աճի տեմպերի արագացմամբ և աշխատավարձի աճի ավելի համեստ տեմպերի արծանագրմամբ:

2007 թ. ոչ առևտրային բնույթի զուտ փոխանցումների աննախադեպ՝ շուրջ 43.0% աճի և Ռուսաստանի տնտեսության սպասվելիք զարգացումների պահպանման պարագայում ակնկալվում է, որ 2008 թ. վերջիններիս աճի բարձր տեմպերը կպահպանվեն՝ կազմելով 28-32%:

Փող և վարկ

Փողի պահանջարկը գնահատվել է դրամային զանգվածի կանխատեսումների հիման վրա, որտեղ որպես անկախ փոփոխականներ հանդես են եկել դրամային զանգվածի նախորդ միտումները և իրական ՀՆԱ-ն:

Ըստ Կենտրոնական բանկի ակնկալիքների՝ 2008 թվականի հունվար-դեկտեմբեր 12-ամսյա ժամանակահատվածում կշարունակվի տնտեսության դրամայնացման ակտիվ գործընթացը, ինչի արդյունքում կպահպանվեն փողի ագրեգատների և, մասնավորապես՝ դրա դրամային տարրերի աճի տարեկան բարձր տեմպերը: Սակայն եռամսյակից եռամսյակ դրանց աճի տեմպերը կդանդաղեն՝ պայմանավորված 2007 թ. արծանագրված մեծածավալ աճի հետևանքով դրամավարկային ցուցանիշների ձևավորված բարձր մակարդակով: Այսինքն, պահպանելով բացարձակ աճի նույն եռամսյակային համամասնությունները, տ/տ աճի տեմպերն աստիճանաբար դանդաղելու են:

2007 թվականին արձանագրված անհամեմատ բարձր աճի տեմպերից հետո դեկտեմբերին հաջորդող մեկ տարվա ընթացքում ակնկալվում է նաև տնտեսության վարկավորման աճի տեմպերի աստիճանական դանդաղում, սակայն այդ ժամանակահատվածում կպահպանվի վարկավորման բացարձակ ծավալների մեծ աճը՝ պայմանավորված հիփոթեքային և սպառողական վարկերի շուկաներում բանկերի ակտիվ գործունեության ծավալման ծրագրերով: Այսինքն, մոտակա մեկ տարվա կտրվածքով տնտեսության վարկավորման տ/տ աճի միջին եռամսյակային ցուցանիշը կպահպանվի 50%-ի սահմաններում:

Գնաճի կանխատեսումներ

Տնտեսության առանձին հատվածներում ակնկալվող ցուցանիշներից ելնելով՝ կանխատեսվել է նաև առաջիկա 12-ամսյա ժամանակահատվածի գնաճը: Տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի պահպանման վարկածի պարագայում, 2007 թվականի դեկտեմբերին հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածի գնաճը կկազմի 5.4%, իսկ 2008 թ. երկրորդ եռամսյակում՝ 6.3%: Ընդ որում, մինչև 2008 թ. երկրորդ եռամսյակի ավարտը բազային սցենարում ներառված է կուտակային ՍԳԻ-ին՝ շուրջ 3.8 տոկոսային կետով հացամթերքի, կենդանական և բուսական յուղերի գների աճի դեռևս ընդհանուր նպաստումը, ինչպես նաև բյուջետային սուբսիդավորման ենթադրվող ավարտով պայմանավորված՝ գազի գների աճի 1.2 տոկոսային կետով նպաստումը:

Հավանական են հետևյալ զարգացումները, որոնք կարող են գնաճի փաստացի ցուցանիշը շեղել կանխատեսվածից՝ աճի ուղղությամբ.


- նավթի և պարենային ապրանքների (այդ թվում՝ հացահատիկի) միջազգային սպասվող գներից ավելի բարձր գների ձևավորում, ընդ որում՝ նավթի գների աճը պայմանավորված կլինի ինչպես աշխարհաքաղաքական, այնպես էլ արտաքին տնտեսական զարգացումներով,
- ամբողջական պահանջարկի կազմում սպառման բաղադրիչի կանխատեսվածից բարձր աճ և սպառման հավասարակշիռ մակարդակից դրական շեղման խորացում,
- տնտեսության վարկավորման՝ կանխատեսվածից առավել բարձր աճի տեմպերի արձանագրում:

Հավանական են նաև ստորև նշված զարգացումները, որոնք կարող են գնաճի փաստացի ցուցանիշը շեղել կանխատեսվածից՝ նվազման ուղղությամբ.

- արտահանման արտարժութային ծավալների աճի (հիմնական մետաղների գների՝ կանխատեսվածից ավելի բարձրացման արդյունքում), ինչպես նաև սպասվածից ավելի կապիտալ ներհոսքի պայմաններում դրամի փոխարժեքի արժևորման արդյունքում ներմուծվող ապրանքների գների նվազում:

Միաժամանակ, գյուղատնտեսության ճյուղի զարգացումները, որոնք հիմնականում պայմանավորված են նաև բնակլիմայական պայմաններով, կարող են և՛ աճի, և՛ նվազման ուղղությամբ ռիսկեր պարունակել:

Գների տարեկան տոկոսային փոփոխություն



2007 թվականի դեկտեմբերին կանխատեսված գնաճը 2008 թվականի IV եռամսյակի համար (5.4%)

Միջակայք	3.0%-ից պակաս	3.0%-4.0%	4.0%-4.5%	4.5%-5.0%	5.0%-5.5%	5.5%-6.0%	6.0%-6.5%	6.5%-7.0%	7.0%-ից ավելի
Հավանականություն	<1	5.6	12.0	17.0	25.0	18.0	14.2	7.3	<1

2007 թվականի դեկտեմբերին կանխատեսված գնաճը 2008 թվականի II եռամսյակի համար (6.3%)

Միջակայք	4.5%-ից պակաս	4.5%-5.0%	5.0%-5.5%	5.5-6.0%	6.0-6.5	6.5%-ից7.0	7.0%-ից ավելի
Հավանականություն	<1	3.2	7.2	21.5	41.8	26.0	<1

Դրամավարկային քաղաքականության ուղղությունները կանխատեսվող 12-ամսյա ժամանակահատվածում

Հաշվի առնելով 2007 թ. չորրորդ եռամյակի զարգացումները և հետագա 12-ամսյա ժամանակահատվածի համար Կենտրոնական բանկի կանխատեսումները՝ ԿԲ խորհուրդը քննարկեց դրամավարկային քաղաքականության հետագա ուղղությունները:

ԿԲ խորհուրդն արձանագրեց, որ չորրորդ եռամսյակի վերջին արտաքին միջավայրի գնաճային ճնշումները պահպանվել են՝ չնայած նավթի և պարենային ապրանքների գների որոշակի կայունացմանը, և կշարունակեն պահպանվել նաև կանխատեսվող ժամանակահատվածում, ընդ որում, արտաքին միջավայրում անսպասելի ցնցումների բացակայության պարագայում կլինեն ավելի մեղմ, քան անցած ժամանակահատվածում: Խորհուրդը հաստատեց նաև, որ ներքին միջավայրի ազդեցությունը նախատեսվածից ավելի փոքր գնաճային ճնշումներ է ստեղծել չորրորդ եռամսյակում, իսկ կանխատեսվող ժամանակահատվածում հավանական է, որ մասնավոր սպառման բարձր աճի տեմպերը, զուգորդվելով առավել ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականության հետ, որոշակիորեն մեծացնեն գնաճային ճնշումները: Այս պայմաններում խորհուրդը դեռևս ռիսկեր է տեսնում 2008 թ. գնաճի նպատակային թիրախի ապահովման ուղղությամբ:

Միաժամանակ, խորհուրդը քննարկեց ՀՀ տնտեսության ու ֆինանսական հատվածին բնորոշ և տարվա սկզբին առավել վառ արտահայտվող սեզոնային դրսևորումները, մասնավորապես՝ հունվարին փողի նկատմամբ պահանջարկի կտրուկ անկման հանգամանքը, որի պարագայում տոկոսադրույքների բարձրացումը ցանկալի ազդեցություն չի կարող ունենալ միջբանկային շուկայի տոկոսադրույքների վրա: Ընդգծվեց նաև, որ վերջին ամիսներին Կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության պայմանների հետևողական խստացումը թույլ է տալիս ձեռնպահ մնալ տոկոսադրույքների բարձրացումից:

Վերոհիշյալի, արտաքին միջավայրի գնաճային ճնշումների մեղմման գնահատումների, գնաճի նպատակային միջակայքի կենտրոնական դիրքից շեղման չափի և տոկոսադրույքների հետագա փոփոխությունների հնարավոր սցենարների վերաբերյալ տա-

րակարծությունների պայմաններում՝ խորհրդի նիստում քննարկվեցին Կենտրոնական բանկի ռեպո տոկոսադրույքը բարձրացնելու կամ անփոփոխ թողնելու տարբերակները:

Արդյունքում, ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 5.75%: Լոմբարդային վարկի և ավանդի տոկոսադրույքները սահմանվեցին համապատասխանաբար 8.75% և 2.75%:

Ներքին և արտաքին միջավայրի գնաճային ճնշումների չթուլացման պարագայում խորհուրդը հետևողականորեն կվերանայի տոկոսադրույքները:

Հավելված

Երկիր	Գնաճի ցուցանիշներ		
	Գնաճի նպատակային ցուցանիշներ	2007թ. սեպտեմբերը 2006թ. սեպտեմբերի նկատմամբ	2007թ. դեկտեմբերը 2006թ. դեկտեմբերի նկատմամբ
Հայաստան	4 % (±1.5%)	2.7	6.6
Ադրբեջան	8%-9%	16.4	16.7 *(19.7)*
Բելառուս	6%-8%	9.0	12.1
Վրաստան	7%	9.0	11
Ղազախստան	8.2%-9.3%	11.2	18.8
Ղրղզստան	5%-6%	13.0	20.1
Մոլդովա	մինչև 10%	14.0	13.1
Ռուսաստան	8%	9.5	11.9
Տաջիկստան	մինչև 7%	16.0	19.9
Ուկրաինա	7.5%	14.4	16.6
Սլովենիա	3.0%	3.5	5.6
Սլովակիա	2.0%	2.8	3.4
Լատվիա	4.4%-6.3%*	11.4	14.1
Էստոնիա	3.5%-4.2%*	7.2	9.6
Չեխիա	3% (±1%)	2.8	5.4
Լեհաստան	2.5% (±1%)	2.3	4

** Գնաճի կանխատեսումներն ըստ OECD, IMF, European Commission և Consensus Economics միջազգային կազմակերպությունների:*

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	2007թ. հունվար – մայիս	2007թ. հունվար – մայիսի իրական աճի ինդեքսը 2006թ. հունվար – մայիսի նկատմամբ (%)	2007թ. հունվար – դեկտեմբեր	2007թ. հունվար – դեկտեմբերի իրական աճի ինդեքսը 2006թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ (%)
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	2711420.7	113.6	3139353.9	113.7
ՀՆԱ դեֆլյատոր *(%. ածողական)*	-	104.4	-	103.9
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. ածողական)* [1]	2505.5	116.6	2892.6	116.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	644815.6	102.7	716054.5	102.6
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	5321.2	99.9	5897.4	99.3
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	577596.6	109.6	633877.8	109.6
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	764277.8	108.9	934379.6	110.0
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	565279.5	119.0	667344.7	119.7
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	485677.4	120.8	542590.8	121.2
Բնակչության դրամական եկամուտները *(մլն ՀՀ դրամ)*	1772595.2	116.2	2125415.7	118.2
Բնակչության դրամական ծախսերը *(մլն ՀՀ դրամ)*	1673310.2	112.7	2001983.1	116.2
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	74981	115.2	76922	114.6
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1165.6	-	1168.0	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	83.4	-	82.8	-
Գործազրկության մակարդակը *(%)*	7.2	-	7.1	-

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2007 թ.	Սպառողական գների ինդեքս	Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս	Գների ինդեքս կապիտալ շինարարությունում	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.4	96.3	99.7	95.2
Փետրվար	100.2	101.9	99.9	96.2
Մարտ	99.4	101.1	101.3	98.6
Ապրիլ	100.1	102.8	100.1	101.0
Մայիս	102.1	98.1	100.7	97.8
Հունիս	99.7	99.7	100.2	78.4
Հուլիս	96.8	99.8	100.1	71.0
Օգոստոս	98.5	100.6	100.0	74.2
Սեպտեմբեր	100.7	100.0	100.0	90.7
Հոկտեմբեր	103.1	104.3	100.2	101.2
Նոյեմբեր	102.1	97.2	100.1	102.1
Դեկտեմբեր	101.5	98.7	100.0	105.9
2007 թ. հունվար – դեկտեմբերը 2006 թ. հունվար – դեկտեմբերի համեմատությամբ	104.4	100.6	104.3	103.4

** Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների:*

ԳՆԱՃ

ժամանակաշրջան	*2005*	*2006*	*2007*	*2007*
	նախորդ ամսվա նկատմամբ (%)			*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	5.4	2.5	2.4	2.4
Փետրվար	-0.7	0.2	0.2	2.6
Մարտ	-0.9	0.1	-0.6	2.0
Ապրիլ	-0.9	0.3	0.1	2.1
Մայիս	0.1	2.4	2.1	4.2
Հունիս	-1.4	-1.2	-0.3	3.9
Հուլիս	-4.5	-0.7	-3.2	0.6
Օգոստոս	-1.4	-0.9	-1.5	-0.8
Սեպտեմբեր	0.9	-0.3	0.7	-0.2
Հոկտեմբեր	0.1	0.2	3.1	3.0
Նոյեմբեր	1.1	1.0	2.1	5.1
Դեկտեմբեր	2.3	1.6	1.5	6.6
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	-0.2	5.2	6.6	6.6
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	0.6	2.9	4.4	4.4

ԳՆԱՃԻ Ն ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [1]

Անվանում	**Նախորդ ամսվա նկատմամբ (%)**	**Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)**
ՍԳԻ	**101.5**	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	102.5	1.35
Բանջարեղեն	123.8	2.1
Միրգ	110.2	0.5
Ձու	103.8	0.1
Ձկնամթերք	109.7	0.1
Կաթ և կաթնամթերք	101.1	0.1
Հացամթերք	100.3	0.1
Ոչ պարենային ապրանքներ	**100.8**	**0.13**
Վառելիք	104.8	0.04
Մշակույթի ապրանքներ	103.8	0.04
Ծառայություններ	**99.9**	**-0.03**
Տրանսպորտ	98.5	-0.06

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [1]

Ժամանակաշրջան	2005	2006	2007
Նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.71	0.39	0.07
Փետրվար	-0.37	0.00	0.01
Մարտ	-0.26	0.06	-0.06
Ապրիլ	-0.26	0.12	0.01
Մայիս	-0.08	0.07	0.03
Հունիս	-0.10	-0.01	0.01
Հուլիս	-0.42	-0.06	-0.01
Օգոստոս	-0.28	-0.04	0.00
Սեպտեմբեր	0.29	0.02	0.36
Հոկտեմբեր	0.03	0.06	1.45
Նոյեմբեր	0.17	0.05	0.67
Դեկտեմբեր	0.29	0.07	0.18
Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.72	0.79	1.04
Փետրվար	1.07	1.18	1.02
Մարտ	0.71	1.38	0.92
Ապրիլ	0.13	1.61	0.65
Մայիս	-0.74	2.49	0.52
Հունիս	-0.57	2.26	1.74
Հուլիս	-0.78	3.20	1.37
Օգոստոս	-0.52	3.29	1.12
Սեպտեմբեր	0.26	2.67	1.62
Հոկտեմբեր	0.32	2.84	2.65
Նոյեմբեր	0.47	2.31	3.31
Դեկտեմբեր	0.52	2.20	3.67

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻ ՆԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ 10 ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [1]

Անվանում	*Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)*
Նախորդ ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**3.67**
Բենզին	0.41
Հաց բարձր տեսակի	0.27
Վճարովի դպրոց	0.18
Բրինձ	0.16
Մակարոն	0.16
Հեղուկ գազ	0.12
Ծառայություններ ախտորոշման կենտրոնների	0.12
Վճարովի ուսումնական հաստատություն (քոլեջ,վարժարան)	0.11
Կարամել (տեղական)	0.10
Եփած երշիկ	0.09

[1] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:*


[2] *Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական գնահատումների:*

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության դիմաց
	կենտրոնական կառավարության պետական պարտատոմսերի գծով	պետական պարտատոմսերի գծով բացի կենտրոնական կառավարության պետական պարտատոմսերից	ընդամենը	կենտրոնական կառավարության հաշվեկշռային միջոցներ	կենտրոնական կառավարության հաշվեկշռային այլ պարտավորություններ	ԾԻԳ-երի միջոցներ դրամով	ԾԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը	
2006									
Դեկտեմբեր [2]	0	4024	4024	61533	96	0	111	61740	**-57716**
2007									
Հունվար	0	3971	3971	75286	94	0	110	75490	**-71520**
Փետրվար	0	3932	3932	76522	93	0	108	76723	**-72791**
Մարտ [2]	0	3765	3765	70179	95	0	111	70386	**-66621**
Ապրիլ	0	5787	5787	93875	94	0	109	94078	**-88291**
Մայիս	0	5648	5648	97279	450	3	107	97838	**-92190**
Հունիս [2]	0	5554	5554	98761	441	1	104	99307	**-93753**
Հուլիս	0	5692	5692	90524	424	3	103	91054	**-85361**
Օգոստոս	0	5494	5494	87510	565	1	103	88179	**-82685**
Սեպտեմբեր [2]	0	5251	5251	92440	563	1	103	93107	**-87856**
Հոկտեմբեր	0	5087	5087	93476	547	1	187	94212	**-89125**
Նոյեմբեր	0	4955	4955	111921	515	166	176	112778	**-107823**
Դեկտեմբեր [3]	0	4541	4541	93623	513	0	175	94311	**-89770**

[1] Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:
[2] Ներառված են եզրափակիչ շրջանառության գործառնությունները:
[3] Ներառված չեն եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Ամվաճում	*2007 թ. հունվար – մոյեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2007 թ. հունվար – մոյեմբերը 2006 թ. հունվար – մոյեմբերի նկատմամբ (%)*	*2007 թ. հունվար – դեկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2007 թ. հունվար – դեկտեմբերը 2006 թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	1061.4	121.1	1157.4	117.5
Ներմուծում *(ՍԻՖ)*	2871.0	147.2	3281.8	149.7
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1809.6	168.5	2124.4	176.1

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ 2006 - 2007 ԹԹ.

հազար ԱՄՆ դոլար


Երկիր	2006 թվական					
	Դեկտեմբեր			Ընդամենը		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	93919	9930	83989	739419	107835	631584
ԱՄՆ	7286	1606	5680	94491	13295	81196
Գերմանիա	1016	496	520	10737	10068	669
Ուկրաինա	926	663	263	7770	6228	1542
Ֆրանսիա	663	367	296	6478	3581	2897
Մեծ Բրիտանիա	633	233	400	8709	2628	6081
Շվեյցարիա	444	161	283	6566	2463	4103
Թուրքիա	111	1081	-971	1272	7846	-6573
ԱՄԱ	188	1671	-1484	2551	10048	-7497
Այլ երկրներ	8404	4694	3709	82932	44444	38488
Ընդամենը	113587	20902	92685	960926	208436	752490

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2007 թվական					
	Դեկտեմբեր			Ընդամենը		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	116785	11618	105167	1078218	129126	949092
ԱՄՆ	5180	3250	1930	76571	23764	52808
Գերմանիա	1607	376	1232	13210	7764	5446
Ուկրաինա	1610	1405	205	14646	10770	3876
Ֆրանսիա	1345	377	969	9659	4851	4808
Մեծ Բրիտանիա	536	97	439	7517	2717	4800
Շվեյցարիա	530	149	382	4865	2151	2713
Թուրքիա	403	517	-115	2268	10338	-8070
ԱՄԱ	202	1050	-847	2812	13339	-10528
Այլ երկրներ	11164	4171	6992	109713	56348	53364
Ընդամենը	139361	23009	116353	1319479	261170	1058310


ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՄԻՋԻՆ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 06	Հ - 07	Փ - 07	Մ - 07	Ա - 07	Մ - 07	Հ - 07	Հ - 07	Օ - 07	Ս - 07	Հ - 07	Ն - 07	Դ - 07
1	368.58	-	358.80	353.97	-	-	347.57	-	337.05	-	334.47	325.16	-
2	-	-	358.85	354.09	362.20	357.00	-	340.50	336.80	-	334.47	325.36	-
3	-	-	-	-	362.67	356.88	-	339.82	337.04	336.48	333.82	-	306.94
4	368.73	-	-	-	363.20	357.32	346.47	339.22	-	336.51	332.87	-	306.50
5	366.83	364.33	359.34	354.06	363.46	-	345.97	-	-	336.83	332.53	325.18	306.44
6	366.51	-	359.21	354.60	363.71	-	345.35	339.05	337.09	337.25	-	324.90	305.67
7	366.20	364.45	359.38	355.34	-	357.45	345.41	-	337.12	337.85	-	324.08	304.71
8	366.03	365.05	358.26	-	-	357.52	345.88	-	337.21	-	332.86	323.31	-
9	-	365.11	357.55	356.00	363.78	-	-	338.71	337.16	-	333.32	322.16	-
10	-	367.53	-	-	365.14	356.94	-	338.86	337.38	338.51	333.45	-	303.70
11	365.91	367.57	-	-	366.30	356.06	346.42	339.02	-	339.14	333.19	-	303.50
12	365.62	367.85	357.17	356.14	367.12	-	346.82	339.16	-	340.10	332.76	320.79	303.01
13	365.11	-	356.21	358.60	367.35	-	347.47	338.53	337.07	340.23	-	320.10	302.36
14	364.80	-	355.74	359.55	-	356.12	347.73	-	336.93	341.10	-	319.78	301.51
15	364.34	367.56	354.99	360.38	-	356.03	347.00	-	336.76	-	332.50	319.68	-
16	-	367.00	354.60	360.87	367.49	355.59	-	338.58	336.67	-	332.42	319.37	-
17	-	366.10	-	-	367.20	354.86	-	338.19	336.91	341.02	332.16	-	302.09
18	363.47	364.07	-	-	366.21	354.17	346.36	337.96	-	340.96	331.80	-	303.36
19	363.58	362.96	354.25	361.35	362.98	-	345.24	337.69	-	340.54	330.83	318.36	304.36
20	363.22	-	353.91	361.35	361.32	-	344.46	337.57	336.84	338.91	-	317.73	303.91
21	363.04	-	353.81	361.22	-	352.99	343.96	-	336.93	-	-	316.43	303.64
22	362.81	362.00	353.70	360.59	-	351.56	343.25	-	337.06	-	328.97	315.21	-
23	-	361.35	353.67	359.96	361.14	350.50	-	337.57	337.13	-	327.56	312.89	-
24	-	360.79	-	-	-	349.63	-	337.63	337.18	338.34	326.37	312.89	303.45
25	362.57	360.46	-	-	360.63	349.05	342.99	337.93	-	337.55	325.30	-	303.48
26	362.34	360.32	353.21	359.68	359.68	-	342.74	337.82	-	336.90	325.15	305.46	304.27
27	362.33	-	353.29	359.84	358.09	-	341.66	337.64	337.12	336.59	325.15	304.33	304.22
28	363.18	-	353.61	360.52	356.97	-	341.02	337.64	336.78	335.79	-	304.56	304.57
29	363.44	360.35	-	361.02	-	348.97	340.95	-	336.56	335.79	324.78	304.54	304.22
30	363.50	360.07	-	362.13	-	348.80	340.95	337.37	336.49	335.79	324.92	305.33	304.22
31	-	359.35	-	-	-	347.87	-	337.18	336.45	-	325.09	-	304.22
ժամանակահատվածի վերջ	363.50	359.35	353.61	362.13	356.97	347.87	340.95	337.18	336.45	335.79	325.09	305.33	304.22
ժամանակահատվածի միջին	364.64	363.71	355.98	358.63	363.33	353.77	344.80	338.35	336.94	338.20	330.28	316.85	304.10




ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀՀ ԴՐԱՄ / ԵՎՐՈ ՄԻՋԻՆ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 06	Հ - 07	Փ - 07	Մ - 07	Ա - 07	Մ - 07	Հ - 07	Հ - 07	Օ - 07	Ս - 07	Հ - 07	Ն - 07	Դ - 07
1	486.53	-	464.79	467.63	-	-	467.59	-	461.99	-	474.25	469.76	-
2	-	-	467.22	468.28	482.38	485.70	-	459.85	460.17	-	476.02	469.27	-
3	-	-	-	-	484.74	484.93	-	461.75	460.53	461.15	472.86	-	453.07
4	488.35	-	-	-	485.16	486.42	465.52	461.37	-	458.73	472.51	-	449.51
5	488.21	479.93	467.86	466.05	485.29	-	466.44	-	-	457.42	469.17	470.83	451.72
6	488.59	-	464.28	463.92	486.39	-	467.33	462.46	461.61	458.26	-	470.72	449.95
7	486.09	476.85	465.58	465.50	-	484.74	466.75	-	465.83	461.81	-	471.44	443.47
8	486.71	477.63	465.27	-	-	486.76	465.90	-	465.15	-	470.53	475.98	-
9	-	474.86	464.49	468.21	486.48	-	-	460.51	465.08	-	469.61	472.48	-
10	-	478.45	-	-	488.30	483.12	-	461.56	463.19	463.62	468.06	-	444.89
11	485.78	477.40	-	-	491.79	481.64	462.44	463.30	-	467.84	471.33	-	446.69
12	481.78	477.62	464.57	468.50	492.60	-	463.18	466.45	-	470.15	472.49	471.02	444.58
13	483.55	-	461.51	471.77	494.71	-	463.70	466.77	460.10	472.41	-	466.67	443.71
14	483.91	-	463.24	475.25	-	480.26	464.05	-	459.94	474.03	-	467.10	442.71
15	480.64	473.90	464.40	475.09	-	482.39	461.65	-	457.69	-	471.25	469.93	-
16	-	474.93	465.84	477.29	497.29	481.40	-	466.63	453.70	-	472.90	467.53	-
17	-	474.21	-	-	497.56	481.69	-	466.06	451.63	472.65	470.01	-	443.56
18	476.69	469.98	-	-	496.18	478.70	461.14	465.40	-	473.15	471.16	-	436.63
19	476.11	469.02	464.74	481.50	492.82	-	462.76	465.30	-	472.23	473.05	466.43	438.77
20	477.67	-	464.75	480.70	491.43	-	461.68	466.52	453.18	473.63	-	465.60	437.17
21	479.32	-	465.08	480.28	-	475.72	461.84	-	454.05	-	-	467.84	435.69
22	477.60	469.08	464.94	479.33	-	472.64	459.85	-	455.30	-	470.03	466.95	-
23	-	467.44	463.52	480.58	491.37	471.56	-	465.95	454.89	-	464.02	463.98	-
24	-	470.47	-	-	-	471.65	-	466.64	457.69	475.33	465.21	463.98	436.36
25	478.30	468.78	-	-	489.81	469.40	461.01	467.46	-	476.38	462.90	-	436.95
26	478.00	467.62	463.91	479.35	490.93	-	461.36	464.27	-	475.23	465.26	452.36	438.09
27	477.99	-	464.93	477.33	486.86	-	459.87	463.31	458.99	475.50	465.26	451.78	438.02
28	479.11	-	467.83	481.19	487.01	-	458.26	463.31	459.97	476.15	-	453.00	442.11
29	478.76	464.89	-	481.89	-	469.47	459.16	-	459.88	476.15	467.16	449.11	446.96
30	478.73	465.25	-	483.52	-	471.19	459.16	460.54	458.67	476.15	467.59	450.00	446.96
31	-	466.15	-	-	-	466.84	-	460.55	457.91	-	468.36	-	446.96
ժամանակահատվածի վերջ	478.73	466.15	467.83	483.52	487.01	466.84	459.16	460.55	457.91	476.15	468.36	450.00	446.96
ժամանակահատվածի միջին	481.75	472.22	464.94	474.91	489.96	478.31	462.76	463.91	459.01	469.90	469.62	464.95	443.24



ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀՀ ԴՐԱՄ / ՌԴ ՌՈՒԲԼԻ ՄԻՋԻՆ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 06	Հ - 07	Փ - 07	Մ - 07	Ա - 07	Մ - 07	Հ - 07	Հ - 07	Օ - 07	Ս - 07	Հ - 07	Ն - 07	Դ - 07
1	14.01	-	13.51	13.54	-	-	13.42	-	13.19	-	13.41	13.18	-
2	-	-	13.55	13.55	13.92	13.90	-	13.19	13.16	-	13.44	13.18	-
3	-	-	-	-	13.95	13.86	-	13.21	13.17	13.13	13.40	-	12.57
4	14.05	-	-	-	13.98	13.89	13.38	13.22	-	13.15	13.35	-	12.53
5	14.00	13.84	13.57	13.53	13.97	-	13.36	-	-	13.16	13.30	13.18	12.52
6	14.00	-	13.54	13.51	14.00	-	13.36	13.21	13.19	13.12	-	13.17	12.52
7	13.98	13.84	13.53	13.54	-	13.87	13.38	-	13.25	13.16	-	13.16	12.41
8	13.98	13.86	13.52	-	-	13.89	13.38	-	13.24	-	13.32	13.17	-
9	-	13.81	13.55	13.57	14.03	-	-	13.16	13.23	-	13.34	13.16	-
10	-	13.90	-	-	14.05	13.87	-	13.18	13.31	13.19	13.31	-	12.38
11	13.95	13.88	-	-	14.13	13.81	13.36	13.21	-	13.26	13.34	-	12.39
12	13.90	13.86	13.53	13.58	14.16	-	13.35	13.28	-	13.33	13.35	13.12	12.41
13	13.90	-	13.52	13.67	14.20	-	13.37	13.27	13.21	13.39	-	13.07	12.37
14	13.91	-	13.49	13.73	-	13.77	13.35	-	13.23	13.45	-	13.04	12.34
15	13.87	13.83	13.49	13.78	-	13.80	13.32	-	13.19	-	13.34	13.05	-
16	-	13.82	13.52	13.81	14.23	13.79	-	13.28	13.13	-	13.34	13.06	-
17	-	13.79	-	-	14.23	13.79	-	13.28	13.09	13.46	13.34	-	12.33
18	13.80	13.70	-	-	14.19	13.72	13.31	13.27	-	13.46	13.31	-	12.28
19	13.78	13.68	13.50	13.87	14.10	-	13.30	13.27	-	13.43	13.30	12.99	12.31
20	13.77	-	13.50	13.88	14.02	-	13.29	13.28	13.09	13.46	-	12.97	12.29
21	13.82	-	13.51	13.87	-	13.66	13.26	-	13.09	-	-	12.95	12.27
22	13.80	13.66	13.50	13.85	-	13.61	13.22	-	13.04	-	13.24	12.95	-
23	-	13.62	13.47	13.86	14.04	13.54	-	13.28	13.05	-	13.20	12.87	-
24	-	13.60	-	-	-	13.50	-	13.30	13.11	13.50	13.10	12.87	12.27
25	13.79	13.61	-	-	13.99	13.48	13.21	13.31	-	13.50	13.07	-	12.27
26	13.75	13.60	13.46	13.83	14.00	-	13.23	13.29	-	13.46	13.08	12.59	12.31
27	13.75	-	13.50	13.80	13.94	-	13.25	13.24	13.09	13.48	13.08	12.52	12.32
28	13.79	-	13.52	13.86	13.87	-	13.17	13.24	13.13	13.45	-	12.53	12.36
29	13.78	13.57	-	13.89	-	13.48	13.22	-	13.11	13.45	13.11	12.50	12.40
30	13.80	13.55	-	13.92	-	13.47	13.22	13.23	13.06	13.45	13.16	12.54	12.40
31	-	13.54	-	-	-	13.43	-	13.17	13.12	-	13.15	-	12.40
ժամանակահատվածի վերջ	13.80	13.54	13.52	13.92	13.87	13.43	13.22	13.17	13.12	13.45	13.15	12.54	12.40
ժամանակահատվածի միջին	13.87	13.73	13.51	13.74	14.05	13.71	13.31	13.24	13.15	13.35	13.27	12.95	12.38



	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ[1]	Ն[1]	Դ[1]
2006												
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)[2]	101.1	101.4	100.3	99.1	101.3	105.0	104.7	106.6	110.1	112.1	113.1	115.9
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	175.8	177.2	176.3	174.8	175.5	184.9	186.0	191.4	199.1	203.2	203.7	207.0
2007												
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	119.2	119.4	117.4	113.7	118.6	121.0	117.5	116.6	114.5	117.9	122.3	128.8
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	209.1	210.9	210.0	204.7	210.1	216.2	217.2	219.2	215.6	217.6	223	233.4


Հաշվարկված է ՀՀ 9 հիմնական գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների նկատմամբ՝ 1999-2003 թթ. կշիռներով:
[1] 2007 թ. հոկտեմբեր – դեկտեմբերը՝ ըստ ՀՀ ԿԲ գնահատումների:
[2] 2006 թվականի իրական փոխարժեքի ցուցանիշները փոփոխվել են Թուրքիայի 2006 թվականի գնածի ցուցանիշների վերանայման արդյունքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	2006	2007											
	Դ[3]	Հ	Փ	Մ[3]	Ա	Մ	Հ[3]	Հ	Օ	Ս[3]	Հ	Ն	Դ[4]
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	1072.0	1063.1	1085.8	1062.9	1120.9	1142.9	1216.0	1270.4	1298.3	1334.0	1376.1	1575.5	1656.9
Համախառն միջազգային պահուստներ	1072.0	1063.1	1085.8	1062.9	1120.9	1142.9	1216.0	1270.4	1298.3	1334.0	1376.1	1575.5	1656.9
Ոսկի	0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	14.1	14.0	11.6	11.7	8.7	12.1	6.0	6.1	3.5	3.6	9.7	8.2	9.7
Արտարժույթ[2]	1058.0	1049.1	1074.2	1051.2	1112.3	1130.8	1210.0	1264.3	1294.8	1330.4	1366.4	1567.3	1647.2

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով և կուտակման սկզբունքով:
[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:
[3] Ներառված են եզրափակիչ շրջանառության գործառնությունները:
[4] Ներառված չեն եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 06[5]	Հ - 07	Փ - 07	Մ - 07[6]	Ա - 07	Մ - 07	Հ - 07[5]	Հ - 07	Օ - 07	Ս - 07[6]	Հ - 07	Ն - 07	Դ - 07[6]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)													
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2,3]	***321863***	***319660***	***327422***	***318318***	***337411***	***345993***	***373804***	***391697***	***401992***	***410540***	***424108***	***494811***	***524208***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-38866***	***-64729***	***-69019***	***-53506***	***-66765***	***-70504***	***-86487***	***-88861***	***-79702***	***-77526***	***-77245***	***-120748***	***-97089***
Կառավարություն	-57716	-71520	-72791	-66621	-88291	-92190	-93753	-85361	-82685	-87856	-89125	-107823	-89770
Բանկեր	7876	-2302	1948	15393	21413	16417	13276	13051	16598	23770	22496	21079	24596
